



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱՎԱԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ  
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՒԻ ՀԻՄՆՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻ  
ԱՌԻԹՈՎ**

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
 ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄՄԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՆ  
 ԵՊԻՍԿՈՊՈՍՊՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,  
 ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՍՏՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄՄԵԾԱՐ  
 ԱԹՈՈՅՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԿ ԷջՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐԴՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐքոՒԹԵԱՆ  
 ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՅՈՅ,  
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՐԱՆԱՅԻՅ  
 ԵՒ ՍԱՐԿԱՐԱԳՎԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,  
 ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐԴՐՈՅՈՅ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԻՅ ԵՒ  
 ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՄԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

Ասպծուց շնորհն ունենք ի Հայաստան և ի Սփյուռք նշանալորեկու 130-րդ յոթելեանական տարեղարձը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան Նոգեսոր ճեմարանի և այդ առիթով ոգեկոչելու պարծանքով լեցուն նրա ճանապարհի նուիրական յիշարակները, որոնք այսօր ազգային մեր կեանքի վերապարթօնքի մէջ գալիս են նորոգելու հաւաքի լոյսը, իմացութեան սերը, նուիրումի ու հաւաքարմութեան յաղթանակող ողին:

Այսօր մեծարումով ենք յիշում երանաշնորհ Գեւորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իմանադրին Նոգեսոր ճեմարանի, ով հաւաքաց ճեմարանի առաքելութեանը՝ իր եղում կրելով մեր ժողովրդի հոգեսոր վերածնութեան ու ազադ կեանքի փեսլականը: Ասրուած

արդինաւորեց Իր Սուրբ Սեղանի անդուլ սպասաւորի և Իր հօփի քաջ հովուի, կրթութեան մեծ շատրագովի ծրագրերն ու ջանքերը. «...յո՞ր զործ և յօժարեցուցանէր զինքն, թեպէս և կարի ի դժուարինս» Տէր յաջողէր ի ձեռու նորա» (Ղ. Փարավեցի): Ծեմարանի հասպարումը իր ժամանակին մեծ ոգեւորութիւն առաջ բերեց հայ ազգային կեանքում, և Գեւորգ Դ Կաթողիկոսն ունեցաւ խանդավառ ու նուիրեալ համախոհներ ու աջակիցներ և մանաւանդ՝ յեւտորդներ, ովքեր հոգի ու ջանք ներդրեցին, որ հասակ առնի և ուսումնական եռուն կեանքով լուսի հոգեւոր կրթօջախը: Արդարեւ, Հայոց Հայրապետը միայնակ չէր իր յոյսերի ու հաւաքի մէջ: Սուրբ Էջմիածնի ասպուածահայեաց հովանու ներքոյ՝ Մայր Ծեմարանը դարձաւ կրթութեան ու լուսաւորութեան կենդրունք հայրենի հողում՝ ծանօթ ու սիրելի ժողովրդին իր հիմնադրի անունով՝ ԳԵՒՈՐԳԵԱՆ:

Գոհութիւն ու փառք Ասպուծոյ, որ իր խնամքի ներքոյ առաջնորդեց ընթացքը Գեւորգեան Ծեմարանի և առաջօրէն օրինեց հունձքը հոգեւոր մշակների: Բազմաթի մեծարելի անուններ են կապուած Ծեմարանի պարմութեան հետ: Այսպես դասսաւանդել են ակնառու հոգեւորականներ, հայ գիրութեան ու մշակոյթի մնձեր: Այսպեսից իրենց ճանապարհն են սկսել նշանաւոր Եկեղեցականներ, կրթութեան ու գիրութեան, պետական ու զինուորական գործիչներ, անուանի արուսափագէտներ: Հայոց նոր պարմութեան կերպողներ են նրանք՝ Եկեղեցական կեանքի, հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ մշակոյթի առաջարարներ, ովքեր որպես կ ծառայութեան կոչուեցին և ինչ գործունեութեամբ զրադուեցին, գործեցին Գեւորգ Դ Հայրապետի վելականուով՝ հաւաքով ու Հայրենիքի սիրով: Նախախնամական էր, որ հայ իրականութեան մէջ բազմապարկուեցին ու օգործան մտաւոր ու հոգեւոր ուժերը՝ հանդիման զալիք փորձութիւնների՝ հայկական դպրոցների փակման փորձերի, համրիճան ջարդերի, Մեծ Եղեռնի, խորիրդային բռնութիւնների: Գեւորգեան Ծեմարանի հարկից ներս կրթուած հոգեւորականաց ասպրդաբոյլը կրեց փազմնապով լի այն ժամանակի դժուարութիւնները, երբ Վերսպին հարցականի ներքոյ էր դրուած հայ ժողովրդի ապրենու իրաւունքը և Հայ Եկեղեցու գոյութիւնը Հայաստանում: Նրանք Ղետոնեան ողին եւ Աւարայրի սուրբ պարզեցին Սարդարապարում ու մնացին «հաւաքով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ», նրանք քանդուող Եկեղեցիների փլաքակների փակ Ցարութեան յոյսը անթեղեցին՝ հաւաքալով, որ նորից պիտի բացուի ազադարեր առաւօքը խաղաղ, և կրկին իրական պիտի դառնան Ազաթանգելոս պարմիչի մարզարեաշունչ խօսքերը՝ «Ես երեւեսցին ձեզ առաջնորդը, քահանայապետը, դժուածք Եպիսկոպոսը և երիցունք Եկեղեցական կարգի լուսաւորութեան սիրոյն Ասպուծոյ»:

Եկաւ այդ օրը, երկնային ողորմածութեամբ փլուեցին արգելքները բռնութեան: Տեսական դադարից յեփոյ Գեւորգ Զ երախտարժան Կաթողիկոսի ձեռքով վերաբացուեց Ծեմարանը և Վազգեն Ա ու Գարեգին Ա երջանկայիշապակ Հայրապետների բարեխմամ հոգածութեան ներքոյ՝ հոգեւոր սպասաւորութեան ճանապարհեց հարիւրաոր Եկեղեցականների: Այսօր Հայ Եկեղեցու անդաստանում, նրս հայստանեան և արդերկերեայ փարքեր թեմերում նուիրումով ծառայում են Ծեմարանի աւագ և կրթսեր սերնդի շրջանաւարդները, ովքեր սիրով ուսանեցին ու հասպարուեցին հոգեւորականի իրենց կոչման մէջ: Մենք նոյնպէս երախտապարտ շրջանաւարդը Մայր Վթոոի Ռոգեւոր Ծեմարանի՝ նոյն խնամքով ու նախանձախնդրութեամբ պիտի հոգանք, որ Ծեմարանը գործի լիաշունչ եւ, ինչպէս 130-ամեայ իր պարմութեամբ է, շարունակի լինել անբաժան մասը հայոց հոգեւոր կեանքի և ողջ հայ

իրականութեան: Շարունակի լինել ու մնալ բազմադարեայ աւանդների անխարքար պահպանողն ու փոխանցողը Սահակ-Մեսրոպեան դպրոցի և դարերի մէջ գործած վանական մեր բարոր դպրոցների, որ կրթեցին ասպուածասէր ու հայրենասէր հոգին մեր ժողովրդի, արարչագործ ու հանճարածնունդ ոգին եւ անեղծ պահեցին քրիստոնէական մեր հատաքը, որ հայոց երկնքում վառ ու պայծառ եւ յաւէր փայլի կանթեղի լոյսը Սուրբ Լուսաւորչի, խաւարացիր իր զօրութեամբ մթութեան ու խութերի միջից առաջնորդի դէպի խաղաղ ու օրինեալ ափեր եւ լուսաւորի ազագ կեանքի յաղթանակները:

Մեր Հայրենիքի ու աշխարհասիւս մեր նոր կեանքի յուսառարութեամբ Մայր Վառո Սուրբ Էջմիածնից Գետրգեան Մայր Ծեմարանի 130-ամեայ յորելեանի ատիթով շնորհաւում ենք համայն մեր ժողովրդին եւ բերում Հայրապետական Մեր օրինութիւնը:

Իշման Սուրբ Սեղանի առջև աղօթում ենք վասն հոգւցն հանգստութեան Ծեմարանի հիմնադիր Գետրգ Դ Մեծագործ Հայրապետի, իրենց հայրական հոգածութեան ներքոյ Ծեմարանը պահպանած Շնորհազարդ մեր հոգելոյս Հայրապետների եւ նրա յարկը շէն ու լուսաւոր պահպանած բոլոր հայորդեաց:

Հայրապետական Մեր օրինութիւնն ու գմանապանցն ենք բերում Գետրգեան Ծեմարանի երախսրաւորներին, Ծեմարանի յաւերժ բարերարներ Գետրգ և Սիրվարդ Յովնանեաններին, նրա բազմաշխատ զործունեութիւնը հոգացող լրեսչութեանը, Ծեմարանում դասաւանդած ու այսօր դասաւանդող մանկավարժներին եւ սիրասուն բոլոր ուսանողներին, որ ընդունել են Աւերարանի կենաց խօսքը քարոզելու, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ծառայելու ճանապարհը:

Թող Տերը հասպարուն ու լուսառար պահպանի նուիրական յարկը Մայր Վառո Սուրբ Էջմիածնի Գետրգեան Ծեմարանի եւ դուրս բերի առար հունձքի ժրաշան մշակներ՝ իմանալի լրյուր սերմանելու մեր ժողովրդի կեանքում վասն Փառացն Ասկուծոյ, ի շինութիւն հայրենի մեր երկրի եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

*Շնորհը եւ սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենան ամեն:*

Օրինութեամբ՝

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի

Տամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌԱՆՑԳ

ի Մայրապան Սրբոյ Էջմիածնի

ընդ համարա 264